

ՆՈՐԻՆ ՍՐԵՌԻԹՅՈՒՆ ՎԱԶԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՅՆ ՀԱՅՈՑ

**Ս. Էջմիածին**

Հոծ բազմության ներկայությամբ և խանդավառ մթնոլորտում կատարեցինք հանդիսավոր բացումը Հայ մշակույթի տաճ և թանգարանի:

Հայերեն և ռումիներեն լեզուներով կարդացվեց Զերդ Սրբության հնագիրը:

Հազար շնորհակալություն Զեր գուրգուրանքի, գնահատանքի և օրինության համար:

ՏԻՐԱՅՐ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՐՏԻԿՅԱՆ

Բոլորակատ,  
30 մայիս 1987 թ.

**ՊՈՒՅՔՐԵՇԻ ՀԱՅ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏԱՆ ԵՎ ԹԱԽԳԱՐԱՆԻ  
ԲԱՅՄԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆ**

Դարավոր Ռումանահայ՝ գաղութը վերջին տարիներին ապրում է իր նոր շրջանի վերածնունդը: Եթե 1966 թվականին Պույքրեշի Հայոց փողոցի վրա գտնվող Հայոց Սուազնորդարանի սրահին մեջ հաս-

տատվում էր մեր գաղութի առաջին եկեղեցական և պատմական թանգարանը, S. Տիրապար եպիսկոպոս Մարտիկյանի ջանքերով, ապա այս տարի, 1987 թվականին վերակազմված և հարստացած թանգարա-




S. Տիրապար արքեպոս Մարտիկյանը արտասանում է բացման խոսքը

Այլ գտնում է իր արժանի և հայրազատ տունը: 1942 թվականին կառուցված շենքը ամենահաջող է Հովհանքի և Վիքթորիա Տուտյանների հիշատակը որպես վար օրինակ հայրենասիրության և ազգապահամաման: Ներշնչված զուտ հայկական ճարտարապետության փայլուն արվեստից՝ համեմուսնում է գեղեցիկ լրացումը Պուբլեշի Հայոց Էջմիածնատիպ տաճարին, որի հետ միասին կազմում են Ռումանիայի մայրաքաղաքի կենտրոնում գտնվող գեղեցկագոյնն և արժեքավոր կոթողներից: Թեև ժամանակի ընթացքին շենքը ծառայեց զանազան նախառականների, վերջին տարիներին Սուաշնորդ Տ. Տիրապը արք-

Սուչավայի Հոգևոր Հովհանք Արամայիս վարդապետ Շլովանը:

Չարաթ 23 մայիս 1987 տեղի ունեցած պաշտոնական այցելությունը Ռումեն Կրոնից Նախարար Խոն Քումիլնաշչուի՝ ընկերակցությամբ եկեղեցական խորհրդի վարիչ, Լեռն Թուատերի, որպես Ռումեն հշանությանց ներկայացուցիչներ: Թաճառի մուտքին առջև բարի գալուստի խուրերով նրանց դիմավորեց Թեմակալ Առաջնորդ Տ. Տիրապը արքեպիսկոպոս Մարտիրոսը, շրջապատված հոգևորականներով և Թեմական Խորհրդի անդամներով: Այցելով լուսավոր և վերանորոգված սրբահները, որտեղ գուրգուրանքով և ճաշա-




Առաջնորդ սրբազն հայրը հավատացալների բազմությամբ՝ Մշակույթի Տաճ բացման առիթին

Եսիսկոպոս Մարտիրոսանի աշխատանքով և շնորհիվ Ռումեն կառավարության բարյացակամության, շենքը ընդունեց իր նոր և ճշնարիտ կոչումը, որպես Գանձատուն հայոց հավատքի, մտքի և արվեստի կոթողների: Այստեղ հավաքվեցին և կենտրոնացան Ռումանիոյ բոլոր հայկական համայնքներից և եկեղեցներից ամենաարժեքավոր իրերը: Այս գործին իրենց նըսպատը բերեցին Պուբլեշի Հոգևոր Հովհանք Տ. Զարեն ծ. վարդապետ Պարոնյանը և

կուլ գետեղված են մեր հոգևոր և մշակութային արվեստի հշարժները, պետական հյուրերը հայտնեցին իրենց գնահատանքը. «Թեև Հայ Համայնքի թիվը փոքր է Ռումանիոյ մեջ, սակայն իր հնությամբ, պատմությամբ, մշակույթով և բարձր ճաշակով արդար իրավունքը ունի ազադիսի շքեղ մշակութային կենտրոն մը ստեղծելու»: Իր խորին մեջ Կրոնից Նախարարը համաձայնություն հայտնեց, որ այսուղև կազմակերպեն հայերեն դասընթացներ և

տարբեր հանդիսություններ և պուլիակ խորհուրդ տվեց ներկայացված իրերով կազմել գեղեցիկ մի ալբոմ: Բարձրատիճան հյուրերը ստորագրեցին Ուկե Մատյանի մեջ: Ապա հրավիրվեցին Հայոց Առաջ-

բը կատարեց հոգևոր երգեր, որից հետո ընթերցվեց Ամենայն Հայոց կայողիկոս S. S. Վազգեն Ա-ի հետևյալ շնորհավորական Գիրը այս ուրախ առիթով:



Հայ Մշակույթի Տունը Բուխարեստում

նորդարանի սրահը, որտեղ տեղի ունեցավ պաշտոնական ընդունելություն և հյուրասիրություն: Բաժանումնեց առաջ S. Տիրայր արքեպիսկոպոս Մարտիլյանը Ռումանիո Կրոնից նախարարին Վեհափառ Հայուակտի անունից նվիրեց «Էջմիածնի Գանձեր» շքեղ ալբոմը և «Արարատ» պատկերաշարը՝ հայտնելով միննույն ժամանակ իր գործունակությունը և շնորհակալությունը:

Կիրակի մայիս 24-ին հավարտ U. Պատարագի, խուռներամ բազմությամբ, գալակտի բազմաթիվ հրավիրյալների ներկայությամբ և S. Տիրայր արքեպիսկոպոս Մարտիլյանի նախագահությամբ տեղի ունեցավ Թանգարանի բացման արարողություն: Ներկաների շերտ ծախահարության տակ Սրբազն Առաջնորդը կտրեց մուտքի ժապավենը: Եկեղեցական երգչախում-

«Տ. Տիրայր Արքեպիսկոպոս  
ՄԱՐՏԻԿՅԱՆԻՆ  
ԱՌԱՋՆՈՐԴ ՀԱՅՈՑ ՌՈՒՄԱՆԻՈ

Բուխարեստ.

Ուրախ սրտով կողջունենք բացումը տիրախնամ Թեմիդ Թանգարանի և գրադարանի մայրաքաղաքի Հայ Մշակույթի շնորհում: Սուրբ Էջմիածնից հղում ենք Մեր օրինությունը Ձեր ամ Աստվածահան իրագործումնեն, մաղթելով որ Բուխարեստի Հայ Մշակույթի Տունը այսպիսով դառնա Հայկական հոգևոր և գրական բազմադարյան արժեքների մի գանձատուն Ձերդ Սրբազնության և Թեմական խորհուրդի հովանունըք:

Մայրում ենք Ձեզ սիրելի Սրբազն և Ձեր գործակիցներին, գործելու անապա-

շինարար եռանդ, նորանոր պայծառ իրագործումներով: Այս երջանիկ առիթով առաքում ենք Մեր հայրական օրինությունը նաև մեր շատ հարազատ Ռումանիոյ լուսուատ հայրենիքի հայ հավատացյալ Մեր զավակներին հայցեղով բոլորի համար Սուրբ Հոգով շնորհները:

### ՎԱԶԳԵՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ»

Ապա Թեմակալ Աստանորդը խոսք առավ, անդրադարձավ օրվա նշանակությանը և ավարտին շնորհակալություն հայտնեց Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին, Ռումանահայ գաղութի հանդեպ հոգատարության համար, շնորհակալություն հայտնեց նաև Ռումեն կառավարությանը, որ հայ փոքրամասնությանը հոգեոր և մշակութային լայն ազատություն է շնորհու: Օրինության խոսքով և հոգումով հիշեց Սըրբական Հայոց Հովհանքի և Վիքորիա Տուտաններին և մեր ժողովոյի բոլոր արժանավոր զավակներին, կոչ անելով հայ երիտասարդներին արթուն լինել և անշեշ պահել մեր նախնաց հավատքը, ոգին և նվիրումը:

Ներկաները հիացումով և հոգումով այցեցին թանգարանի սրահները՝ գնահատելով ցուցադրված իրերի բազմազանությունը և հնությունը: Գնահատանքի արժանացան եկեղեցական հիմ վարագույնները բերված Սուչավա և Պոթոշան քաղաքներից, ինչպես նաև հայատիպ սրբանուկարներն ու եկեղեցական սպասները Յաշ, Պաքու և Ֆորչան քաղաքներից: Հատուկ ուշադրության արժանացան 1351 թ. Կաֆա ընդօրինակված հայերեն ձեռագիրը, ինչպես նաև այլ բազմաթիվ ձեռագրեր ընդօրինակված Ռումանիոյ մեջ երեւմնի եպիսկոպոսանիստ Սուչավա քաղաքու: Հետաքրքրության արժանացան թանգարանի այն ցուցահետեղերը, որտեղ եկեղեցացվում են Ռումանիոյ հնագույն հայ ընտանիքները, կարտորագույն մշակութային, արվեստի, քաղաքական, գիտական և եկեղեցական հայագիտ գործիչները: Իրենց հասող տեղը ունի Ամենայն Հայոց Հայրապետը և Ռումանահայ Թեմի Աստանորդը: Կան նաև բազմաթիվ եկեղեցական Կոնդակներ և պատմական արժեքավոր փաստաթղթեր: Սրբադրության ավարտին Սրբազան Աստանորդը, մյուս հոգևորականները, թե-

մական և թաղական խորհրդների անդամները և ներկաները գրեցին իրենց տպավորությունները և ստորագրեցին Ուկե Մատյանու:

Հաջորդեց Առաջնորդարանի սրահին մեջ պատվիրակների պաշտոնական ընդունելություն և հյուրադրություն:

Նոյն օրերին Ռումանահայ գաղութին հյուրը եղավ նաև Ռումեն Պողոսի Պաղապահ Եկեղեցու Նորընտիր Հովհանքներ Թեոկտիստ Պատրիարքը իր շքախմբով:

Պուրեշի Հայոց Եկեղեցու զանգերի ուրախ դողանչի տակ Թեմին Առաջնորդ Տ. Տիրայր արքեպիսկոպոս Մարտիրոսնը շերմորեն ողջունեց Ռումեն Եկեղեցու Հովհանքներին և մյուս բարձրաստիճան հոգեւորականներին: Ներկա էին Պուրեշի Հովհանքը Հովհանք Տ. Զարեհ ծ. Վարդապետ Պարույրնը, Սուչավայի հոգեոր հովհիկ Տ. Արամայիս Վարդապետ Ծովիկյանը, Թեմական և Թաղական Խորհրդի անդամներ:

Եկեղեցական աղոթքից հետո բարձրաստիճան պատվիրակությունը այցելեց Պուրեշի Հայ Մշակույթի Տունը և Թանգարանը, որտեղ հայ երիտասարդներ ազգային զգեստներով և ծաղիկներով դիմավորեցին հյուրերին: Այցելության ընթացքին Ռումեն Հովհանքները և պատվիրակության անդամները բարձր գնահատեցին Հայոց Եկեղեցին և Հայ Ժողովրդի մշակույթը՝ ցանկության հայտնելով ավելի ամրապնդել և սերտացնել մեր երկու ազգային բրիստունեական Եկեղեցների կայերը: Այս իմաստով Ռումեն Եկեղեցու Հովհանքներ խոստացավ կրկին այցելել Հայոց Եկեղեցի՝ Աերկա գտնվելու կիրակնօրյա արարողությանը:

Ռումեն Պատրիարքը և մյուս բարձրաստիճան հոգևորականները օրինությամբ և սիրով ստորագրեցին Ուկե Մատյանին մեջ:

Հաջորդեց հյուրադրություն, որի ընթացքում Ռումանահայ Թեմի Աստանորդ Տ. Տիրայր արքեպիսկոպոս Մարտիրոսնը հայտնեց իր շնորհակալությունը հասող հայության և առաջարկեց բաժակ բարձրացնել մեր Եկեղեցների Հովհանքների կենացը, մեր ժողովուրդների բարեկամության կենացը:

Այսպիսով ավելցավ լուսավոր մի էջ ևս մեր դարավոր գաղութի պատմության վրա: